ԱՐՏԱՎԱԶԴ
ՍԱՐԵՑՅԱՆ

ԱՐԵՎԱԲԱՄԲ

ԱՐՏԱՎԱԶԴ
ՍԱՐԵՑՅԱՆ

ԱՐԵՎԱԲՄԱՐ

«Մերաճի» հրատարակչություն
Թբիլիսի 1989 թ.

«Արևաքամի» ժողովածուն Արտավազդ Մարեցյանի երկրորդ գիրքն է, որն իր մեջ ամփոփում է հեղինակի վերջին տարիների բանաստեղծություններբ՝ նվիրված հայ ժողովրդի պատմական ճակատագրին, հայրենի բնությանը։ Մի առանձին բաժին են կազմում մանկական ստեղծագործությունները։

Հեղինակի առաջին գիրքը «Մերանի» հրատարակչությունը լույս է ընծայել 1981 թվականին։

4702080200
С ——————— 140-89
М 604 (08)-89

© Издательство «Мерани», 1989 г.

ԲԱԽՏԻ ՀՈՐԻԶՈՆ

ՆԱԻԻ

Քարտեզիդ ամեն անգամ նայելիս
Նուրբ մարմինը քո անկուշտ հոշոտող
Գազանների գոռ մռունչ եմ լսում։
Եվ քո վերքերից ծորում է արյուն՝

Դառնալով Մեծն Մաշտոցի ԱՅԲ, ԲԵՆ,
Խորենացու ՈՂԲ,
ՆԱՐԵԿԱՄԱՏՅԱՆ
Եվ Կոմիտասի մորմոք՝ ԱՆՏՈՒՆԻ։

Եվ քո վերքերից ծորում է արյուն՝
Դառնալով ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ՝ դարերի
Համար խոր խորհուրդ՝
Սակայն մեզ համար՝ այնքա՜ն-այնքա՜ն
պարզ։

Քարտեզիդ ամեն անգամ նայելիս
Տեսնում եմ՝ լոկ քո ՍԻ՜ՐՏՆ է մնացել
Ինչպես ԲԱԽՏԻ ՋԱՀ
Եվ ԲԱՐՈՒ ԲՌՈՒՆՑՔ։

ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՀԱՄՇԵՆԱՊԱՏՈՒՄ» ՊԱՏԵՄԻՑ

1. Մտորումներ նկարիչ Վ. Աբրահամյանի արվեստանոցում

...Քանի՜—քանի՜ դար չեղավ, չգտանք
Տառապանքների երկու արահետ,
Որ լուռ, աննկատ և հաստատորեն

Բարձրանային վեր
Եվ հեռո՜ւ-հեռո՜ւ աստղերի վրա
Միաձուլեին արշալույսի մեջ
Մարմին ու ոգի։
Ոգի ու մարմին։
Ջեղա՜վ, չգտա՜նք։

Ես հիմա ցավի կրակ եմ արել
Անապատներում ճակատագրերի,
Եվ ավազ է շեկ շուրջն իմ փայլփլում
Ինչպես հեռավոր և չմոռացվող
Աչքերի հրճվանք անհավաքելի,
Անվերծանելի դարավոր մորմոք։

Եվ հանկարծ որպես բազմաստեղ հրաշք,
Որպես Հողի ձոն
Եվ երկնքի հիմն
Իմ ականջներում այն երգն է հնչում,
Որն ունի միայն մեկ արդար ծնունդ,
Եվ ունի միայն մեկ անեղծ թռիչք
Եվ վախճան չունի ոչ Հողի վրա,
Ոչ Տիեզերքի
Անսահմանության ոլորանների մեջ։
Հո՞ղը երերաց իմ ոտքերի տակ,
Թե՞ հոգիս ցնցվեց Բառի պայթյունից —
Գուցե երկո՞ւսն էլ եղան միասին
Երաժշտության՝ իրար լրացնող
Հնչյունների պես փոթորկածավալ։

Եվ արմատներիս
Դեմ առան քարեր —
Հսկա,
Դարավոր,
Կարծրագույն քարեր։
Եվ արմատներն իմ

Սահեցին նրանց կողերով ներքև
Եվ փաթաթվեցին — միահյուսվեցին
անբաժանելի
Եվ ագուցվեցին
Մեջքը աղջկա գրկող ձևքերի
Մատների նման։ —
Եվ հիմա չկա ոչ մի հզոր ուժ,
Որ ինձ բաժանի իմ քարոտ հողից։
... Արդ երազանք է աչքիս դեմ կաթում
Ինչպես թախծի լույս
Եվ լույսի թախիծ՝
Շաղվելով եղերին
Մեծ Տարածության,
Որը կոչվում է
Բախտի հորիզոն...

2. Ողբ մի բուռ հողի

... Ամեն տարագիր
Ու բախտագնաց
Որպես օրհնություն
ու ոգեղեն հաց
Ծոցագրպանն է մի բուռ հող դրել
Եվ մի սևակնած արահետ բռնել...
... Ու անցած իրենց ճանապարհներին
Լո՜ւյս — լո՜ւյս մաշելով կարոտի բարին՝
Քայլել են, քայլել ծանր ու գլխահակ...
Քայլել են
մրսող սրտերին՝ կրա՜կ —
Մի բուռ հայրենի
Օրհնանք ու ցասում,
Մի բուռ փոթորիկ
Ու մի բուռ մասունք,

Մի բուռ խենթ ավիշ,
Մի բուռ թալիսման,
Ոգու սուրբ նեցուկ,
Ոգու հենարան...
Բռնել են նրանք մի մոլոր ուղի
Եվ ձգողությունն հայրենի հողի
Հաղթահարելով
չե՞ն ... հաղթահարել
Եվ նորից իրենց հողով են ապրել —
Այրվել են իրենց հողի կարոտով,
Արբել են իրենց հողի խաղողով
Եվ հագեցրել են ծարավը՝ իրենց
Հողում ամփոփված աղբյուրով անեղծ...
Սակայն...
Տարե՞լ են հողը հայրենյաց
Որպես օրհնություն
Ու ոգեղեն հաց,
Որպես ինքնաստեղծ մի ռումբ են տարել,
Որ պայթի, եթե մայրենին դավեն,
Տարել են դառնա խոժոռ գերեզման,
Եթե սև գործի լինեն համաձայն,
Պաղունց առ պաղունց տարել են, տարե՞լ
Եվ հայոց հողում...
էլ հո՞ղ չեն թողել...
Եվ մնացել են ժայռեր ամեհի
Սուր-սուր կողերին՝ արևաքամի: —
Իրար որոնման արդյունքով
իրար
Ներծծված արև ու հողմածեծ քար...

3. Գարուն է նորից
Գարուն ա, ձուն ա արել

Գարուն է նորից:

Արդեն չեն լսվում
Հողմերի գայլա-ոռնոցները սուր,
Ձարթնող բնության խոր հրճվանքի մեջ
Երազանքների սալյուտի նման
Պայթում են երգի բողբոջները բյուր:
Գարո՞ւն է նորից:
Ծիծեռնակն արդեն
Պոչի մկպատով
Գարնանամուտի ժապավենը ալ
կտրել է բացման,
Եվ լեռնաշխարհն է արտասվում մաքո՞ւր,
Եվ լեռնաշխարհն է արտասվում խորո՞ւնկ,
Բայց արտասուք է դա թեթևացմա՞ն...
Գարո՞ւն է նորից...
Հնանոր մի տոն...
... Եվ իմ մեջ ցավի
մի ռումբ է պայթում,
Որ, ավա՞ղ, դրախտի հոգեձիգ մուտքից
Մարդ հաճախ նաև ...
դժո՞խք է մտնում ...

4. Աղրիտ (Տրապիզոնի գավառ)

Բարեկամին հասկանալու համար
նրա հետ պիտի մի փութ աղ ուտես

Աղրի՜տ, ա՛խ—Աղրի՜տ...
Մենք բարեկամներ դառնալու հույսով
Քանի՜ փութ աղ ենք կերել ու կերել...
Եվ Տրդատ պապի բերած աղն անգամ
Քի՜չ է եղել, որ ցավով հասկանանք,
Որ բարեկամներ չենք էլ ունեցել...
Աղրի՜տ, ա՛խ—Աղրի՜տ...
Մեր կերած աղից

Ադի է անգամ արտասուքը մեր ...
Եվ Յամպոլի գետն արտասուքն է մեր
Սև ծովը լցրել՝
Նրա ջրերում աղը լուծելով ...
Աղրի՜տ, ա՜խ—Աղրի՜տ ...
Մեր կերած աղից
Աղի է անգամ ...արյո՜ւնը մեր տաք
Եվ... փառքն արժանի է եղել միշտ քեզ...

5. Լեգենդ Եփրեմ պապից

...Եվ ամեն-ամեն օր,
Եվ ամեն-ամեն առավոտ
Հողը բարձրանում էր վեր։
Բարձրանում էր—բարձրանում
Եվ հավասարվելով քեզ՝
Սիրտը դնում քո ականջին,
Որ լսելով
Հատու զարկերը նրա՝
արթնանաս

Եվ աչքերիդ լույսը՝
դառնալով ցայգաբաց
(Այդ պատճառով էր
Նա այնքան բարի
Եվ արդար այնքան),
Կոկոնաբացվեր
Ծովափնի վրա
Եվ բուրմունքն իր սփռեր
Մարդկանց հոգիներում։

Բայց մի օր էլ
Հողը չբարձրացավ,
Եվ դու զարթնեցիր անհանգստացած —

Չլինի՝
Նեղացե՞լ է իր մշակից ...
Աշխատանքից կոշտացած ձեռքերով
Քնքուշ շոյեցիր
Միշտ քեզ հետ քնող թոռան՝
Բարձի վրա ալիքվող
Գանգուրները,
Համբուրեցիր ճակատն ու դուրս եկար։
Քո հաստատուն քայլերի՞ տակ,
Թե՞ տագնապահալած —
Մտորումներիդ
Ծանրության ներքո
Չլուներ տնքաց-տնքաց
Չլուներ տնքա՞ց-տնքա՞ց։
Եվ առավոտն հախճապակյա
Ջմեռային անտառի
Խորհրդավոր լռության
Մեկնաբանումը խոստացավ քեզ։

Հետո դու անշտապ կռացար,
Չլուներ զգուշությամբ
Եւ արիր ձեռքերով,
Եվ ականջդ դնելով հողին՝
զգացիր,
Որ թուլացե՞լ է նրա զարկերակը։

... Եվ դու որոշեցիր
Հողի սրտի զարկերից մեկը դառնալ։

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ, ԴՈՒ ԹԶԵՆՈՒ ԾԱՌ

Շ. Ցվիժբայից

1. Դարերի ընծան

Հրդեհն է անկուշտ կպչում մի հայ տան
Եվ առաջ շարժվում գազազած, համառ։
Եվ հայը՝ որդին անվեհերության,
Դժոխքն է նետվում... ապրելո՛ւ համար։

Տանում է նրան հույսը աներեր...
Ետ չմնալով գեթ մի ակնթարթ
Հայն շտապում է, բայց ոչ հագուստներ,
Ոսկի ու մանյակ փրկելու համար։

Եվ հացի մասին չի մտորում նա։
Ուժերը վերջին լարած, անարյուն՝
Հրդեհի ճանկից նա հայակործան
Ծանր սնդուկն է ուսած դուրս բերում։

Կրկնապատկվում է հրդեհն աննահանջ։
Մշուշ է չորս կողմ, խավար անսահման,
Սակայն խավարի միջից անթափանց
Արև է ծնվում—Մատենադարան։

Եվ շատ է տեսնում դժբախտություններ,
Սոված է լինում հայը և անտուն։
Սակայն դարերի խորքից—անվեհեր—
Նա իր սնդուկն է դարերին տանում։

Ձմռան հողմերի միջով է տանում,
Տանում է ամռան հոգեառ շոգին։
Իր կյանքը երբեք նա չի խնայում —
Պահպանում է նա իր հայոց ոգին։

Եվ իր հազվագյուտ ձեռագրերն ուսին
Տանում է ճամփով նա հավերժության
խոսք նախնյաց անմեռ փառքերի մասին,
խոսք հետնորդների մեծ հպարտության։

2. Թզենի

Եվ հողը թող խոնավ լինի,
Բերք է տալիս թզենին։
Եվ թող ավազ ու կավ լինի,
Բերք է տալիս թզենին։
Եվ ավելին—ժայռ է լինում,
Բայց չի լալիս թզենին,
Արմատներով ժայռը ճեղքում,
Բերք է տալիս թզենին։
Թզենի, քեզ հիմն եմ երգում,
Փառք եմ երգում ու օրհնանք,
Որ ոչ մի տեղ քեզ չես կորցնում,
Աճում ես ու տալիս
կյա՛նք։

3. Երգերի հատորյակը

Եղ. Չարենցին

Հատորյակդ նոր երգերիդ
Հեռանալիս տվեցիր ինձ։
Քո ձայնը ջինջ լռության մեջ։
Դառն էր հնչում —հոգու կսկիծ։

Հետո... ընկա ես մի աշխարհ,
Որտեղ ցրտից թռչունն անգամ
Սառչում էր ու երգն իր թաղում
Ձյուների մեջ հավերժական։

Ես սրտիս մեջ հանց թալիսման
Քո իմաստուն խոսքն եմ պահել.

Ով հպարտ է ապրել ու քաջ,
Եղել է միշտ հոգով ջահել։

Իմ արյան մեջ կյանքն էր եռում,
Ես հայացքս չեմ շրջել ետ,
Ուժ էր տալիս մեզ երգը քո,
Թև էր տալիս, տանում իր հետ

Եվ հավատի զանգի նման
Ղողանջում էր մեր սրտերում,
Ջյունների տակ, փոթորկի դեմ
Հրդեհն էր քո նորից հառնում։

Շատ տարիներ եկան-անցան,
Հատորյակդ ...գունաթափվեց,
Բայց անգամ դեթ մի ակնթարթ
Կրակը քո չհանդարտվեց։

Եվ եկավ իմ օրն երազած,
Դեպի քեզ եմ թռչում ահա,
Որ շշնջամ՝ ճամփից եմ հս,
Ես կենդանի քեզ մոտ եկա։

Բայց երերաց հողն ոտքիս տակ,
Հոգիս մթնեց —աստված վկա՛ —
Երբ առացին, որ աշխարհում
Իմ եղիշեն... վաղո՛ւց չկա...

... Ոմանք թողնում են աշխարհին
Արձանների քարեր մեծ-մեծ,
Իսկ մյուսներն՝ անդարեդման,
Կտակում են կյանքին... Իրե՛նց։
Բայց ...

Աշխարհն այն խո՛ւլ է, մռա՛յլ։
Ես մի բան չեմ հասկանալու —

Ինչո՞ւ նման բախտ տրվեց քեզ.
Դրա համար չես ծնվել դու։

ԵՐԵԿՈՅԱՆ ԷՔՍՊՐԻՍՏ ՄԱՍԻՍԻՆ

Հրճվանքների հետ արևաքամու,
Կարոտների հետ արևգակնացայտ,
Աստղալույս շնչող երեկոյի մեջ
Լուսինը գլխիդ իբրև բախտի պա՛յտ,
Թե՞ իբրև մի կիտ յաթաղա՛ն ծագեց։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Բարձրակետն եմ ու կենտրոնը հողի։
Ես նորացման վիհ կրակ եմ պահել
դարերի համար։
Իմաստության պայթյունն ամփոփել
ամեն բառի մեջ,

Դարերի թևին
ժամանակների խորհուրդը շարել
հանց հուլունքաշար։
Իմ դժվար ուղին անցնում է հավերժ
Պաղ դատողության և այրվող սրտի
սահմանագծով —

Ծա՛նր էր իմ հոգին,
Ծանր՝ իմ մարմնից —
Հանուն հարության կյանքապահ խղճի

Տրոհե՞լ եմ իմ հոգին սիրո մեջ
Եվ... դատարկվե՞լ է մարմինս արդեն...
Եվ դատարկվա՞լ է մարմինս արդեն
Եվ չի մնացել իմ մեջ հոգի, որ
երկինք համբառնա...
Ներիր ինձ, աստված,
Եթե կաս՝ մեղա՞...

ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Երբ Սարն է լուծվում
Անքնության մեջ մոայլ ամպերի,
Ո՞ւմ երիրպագեմ աստվածացնելով,
Ումի՞ց թողության հայցեմ ծնկաչոք,
Լույսով մակարդված շուրթերով պապակ...

Եվ երբե՞ք-երբե՞ք չի ունենա վերջ
Որդան կարմիրը հայոց բախտի մեջ։

ՀԱՎԱՏ

Ակնթարթը այս
Լեցուն է խոտի
Թարմությամբ կանաչ
Ու շնչառությամբ,

Օրվա երկունքի
Քաղցր ցավերի
Արտացոլանքով

Յողի մեջ արդար։

Ակնթարթը այս
Լեցուն է գետի
Նախնական գույնի
Խոր գեղեցկությամբ

Եվ մի հավատով՝—
Մայրամուտ կիջնի
Նոր առավոտներ
Ծնելու համար։

ՏՈՒՆ

Աստմ էր հաճախ
Պապս իմաստուն.
— Ուր էլ որ գնաս
Կառուցիր նոր տուն։

Տուն կառուցիր այն
Հավատով, բալաս,
Որ ուր էլ լինես
Անկյուն ունենաս։

Զարմանում էի,
Անչափ զարմանում —
Ամեն տեղ ինչպե՞ս
Կառուցեմ նոր տուն,

Որտեղի՞ց այդքան
Շինանյութ ու փող.
— Ի՞նչ ես ասում, պապ,
Աստված սիրես, թո՛ղ...

Հասկանում եմ արդ
Պապիս խոսքը պերճ.
Տուն պիտի շինել
Մարդկանց սրտի մեջ։

ՏՈՂԸ ՍԱՆԴՈՒՂՔ Է ԱՆԴՈՒՆԴԻ ՎՐԱ

Երդատողիս մեջ պակասից մի 'բառ...
Գահավիժեցի ես անդունդ մի խոր...
Եվ իմ հետևից քարերի նման
Ներքև թափվեցին բառերս բոլոր...

Ի՜նչ սարսափելի բառաթափ էր դա...
Ի՜նչ աշխարհացունց դղրդյուն էր բառի...
Կայծակում էին շանթերի նման
Իրար հալածող բառերը վայրի...

Ես շանթերի մեջ դողո՞ւմ էի ես...
Եվ իմ աչքերից արյուն էր պայթում...
Եվ իրարամերժ հարվածների տակ
Ոսկորներն էին իմ անզոր ճայթում...

... Ես ուշքի եկա խորքում անդունդի՝
Սուր-սուր բառերի մեջ կիսաթաղված,
Եվ հանց փրկության հույսի բարակ շող՝
Թևն էր արյունիս վերևից կախված...

«ԼՐՏԵՍԸ»

Արտասահմանում
Եվտուշենկոն էր
Ելույթ ունենում՝
Դահլիճն համակված՝
Բանաստեղծի չինչ
Աշխարհը մտնում
Եվ իր համար նոր՝
Այնքա՜ն հմայիչ
Գանձեր էր գտնում...

Եվ հնչում էր՝ մերթ
Փոթորկվող ուժգին
Ձայնը պոետի
Հանց լեռնային գետ՝
Ունկնդիրներին
Թևերին առած
Կարոտի նավով
Տանելով իր հետ...
Մերթ էլ խաղաղվում
Լայն հանդարտությամբ
Դաշտասահ գետի՝
Արտացոլելով
Ճառագայթները
Սեր—արեգակի...

... Ու մեկ էլ հանկարծ
Քար լռության մեջ
Խորհուրդ հնչում է
Հիստերիկ մի ձայն.
— Դուք սովետական
Լրտե՞ս եք, ծպտյա՜լ...

Եվ քարանո՞ւմ է

18001

Դահլիճը մի պահ
Եվ ծափից թնդում
Մեր բանաստեղծի
Ուղղումից հետո.
— Ես սովետական
Գրականությա՜ն
Լրտեսն եմ, պարոն։

* * *

Մեկ-մեկ լինում է՝
սաստիկ փոթորկված
Մտորումներից ինչ-որ մութ, խրթին,
Մեզ թույլ ենք տալիս
անզգույշ արարքներ,
Որ չէինք անի հանգիստ պահերին։

Բարեկամներին կոպտում ենք իզուր,
Որոնք մեր լավն են միայն
ցանկանում,
Եվ ամեն անգամ, և ամեն անգամ
Արդարացի ենք մենք մեզ համարում։

Ավաղ, հետո ենք հասկանում ամբողջ
Ծանր արդյունքը մեր անզգուշության։
... Գետն հանդարտվում է
հեղեղից հետո,
Ավերումները մնում են, սակայն։

ՇԵՐԱՄԻ ՈՐԴ

Ես երկրագնդի կողմերով բոլոր
Հավասարաչափ ուժով տարածվում,
Ճամփա եմ հանում անձրևի միջից
Եվ ոլորելով ջրաքամ անում։ —

Եվ կարկատում եմ մաշվածքները խոր,
Որ հողմը հոգին չդադրի նրա...
Հետո հոգնությունը թափ եմ տալիս...
Հետո փաթաթում եմ մարմնիս վրա...

Եվ հանց տատիկիս թելերը մանած
Հորիզոնն եմ իմ վրա կծիկում...
Եվ արդեն-արդեն ամփոփված հոգիս
Իմ հյուսած կոկոնն է ներսից ծակում։

ԳԼԽԱՊՏՈՒՅՏ

Իսկ թռչունները
Թևում են մայիս՝
Բարձունքի սաթե
Գինով վերացած.

Առանց Ձեզ դեռ իմ
Հրճվանքն՝ անորոշ,
Ձեզ հետ վիշտն է իմ
Արդեն գիտակցված։

Իսկ թռչունները
Թևում են մայիս՝
Լցված պատրանքով
Գարնանամուտի.

Հասկանալի է
Թախիծն իմ չեղած,
Եղած խինդս՝ ճիչ —
Կոցին կապուտակ։

Իսկ թռչունները
Թևում են մայիս՝
Կարոտիս բեռը
Թևերից կախած.

Հնարավոր չէ
Ցավս թաքցնել,
Եվ աննպատակ՝
Բացվել քո առաջ...

... Թռչունները ետ՝
Մայի՞ս են թևում,
Թե՞ ժամանակն է
Իր մեջ ամփոփվում։

ԿԻՍԱԽԱՎԱՐ

Ճմրթված պատառն անձեռոցիկի
Սփռոցին թափված սև գինին ծծել,
Կարմրել է ու դժվար է արդեն
Կաղամբաթերթի թուրշուց տարբերել...

Ծևծած բիբառի սև փոշու նման
«Սալյուտի» մոխիրն է
թափվել տորթին...
Եվ ստվերներն են ողբ-երաժշտության
Հարվածների տակ տնքալով ոտքի՝

Ճգնում մագլցել ալեբաստրաքաշ

Պատերը ի վեր մի կերպ... մի կե՞րպ... մ՞ի...
Սակայն... պոկվում են և կծկվում՝ լայն
Տարուբերման մեջ կիսախավարի...

ՀԱՏՈՒՑՈՒՄ

Երկինքն է ջարդված
Ապակու վրա,
Բեկվելով հատվում
Լույսն արեգակի...
Եվ վերջին պահին
Եվ վերջին պահին
Թույլ հորիզոնի
Կարվող թելից
Անշարժություն է
Ճոճվում ձեռքերիս։

Պատերից կաթող
Կարմիր աղահոտ՝
Քառսվող պղտոր
Ճշերի խրձում...
Եվ վերջին պահին
Եվ վերջին պահին
Աչքերիդ սև-սև
Շրջաններիդ մեջ
Արդեն մեռածիս
Նկարն է թախծում...

Արյան եռքի մեջ
Էլ բառեր չկան...
Գործած մեղքի մեջ՝
Մեղքաքավություն...

Եվ վերջին պահին
Եվ վերջին պահին
Տյոհվող հևքի
Ցնցումների մեջ
Սիրո հատուցման
Օրենքն է գործում...

* * *

Ինձ չլսեց ոչ ոք, ոչ ոք,
Ոչ ոք - ոչ ոք լույս չվառեց: —
Եվ սարերը մութ թվացին
Կրակների հանգած մոխիր,
Քանդի ոչ ոք լույս չվառեց:

Աստղացանցի մեջ չտեսա
Երազանքի թպրտող կանչ: —
Ես հրաշքն այդ կաղատեի
Եվ կառնեի ափերիս մեջ:

Եվ կառնեի ափերիս մեջ,
Հանց աղբյուրի բյուրեղ կարկաչ,
Կառնեի ցայգալույսին,
Որ տրոփեր զարթնած մի սիրտ:

Որ ալիքեր կապույտ մի ծով,
Ես կառնեի ափերիս մեջ:

Սակայն ոչ ոք ինձ չլսեց,
Լույս չվառեց ոչ ոք, ոչ ոք:
Ես չտեսա թպրտող կանչ
Աստղացանցի մեջ խտացող,
Քանդի ոչ ոք ինձ չլսեց:
Լոկ մի ցավ էր անսահմանվում
Իր կծկվող պիրկ կետի մեջ: —

Որ աննշան մի ակնթարթ
Նրա ճիշը հարատևի,
Մի մե՛ծ ցավ էր անսահմանվում:

ՉՀԱՍԿԱՑԱՆՔ

Ո՞վ մեզ ոտք տվեց փախչելու համար,
Եվ չդատելու համար տվեց խելք,
Եվ չգրկելու համար թև տվեց,
Եվ չտեսնելու համար տվեց աչք,
Եվ չսիրելու համար սեր տվեց:

Ո՞վ մեզ կհիշի մի բարի խոսքով,
Ո՞վ կթափթի մեր կարոտի վրա,
Ո՞ւմ հոգու մեջ մի բառ լույս կմնանք,
Երբ չհասկացանք,
Որ արշալույսին չի՞ մեռնում ոչ ոք,
Որ մահանում են լոկ մայրամուտի՛ն,
Մենք չհասկացա՞նք,
Մենք չհասկացա՞նք...

ԱՒՏ ԱՇԱՒՆ

Սիրտ իմ, դու չասես
Գիտեցածը քո:
Ինչ ասում ես դու,
Սիրտ իմ, Գիտեցիր:

Տերևների պես

Իմ գիտակցության
Պատառներն էին
Ջվում ցան ու ցիր։

Բախտիս ճամփին եմ
Շփոթվել հաճախ —
Որն է մայրամուտ,
Որը արշալույս։

Երբ ճչալ էր պետք,
Լռել եմ ահից...
Երբ լռել էր պետք,
Ճչացել անհույս։

Եվ ինչքա՞ն պիտի
Իմ կարոտների
Երկինքը, արդյոք,
Միգապատ մնա։

Վախեցել եմ, որ
Չե՛ս հեռանա դու,
Սարսափել եմ, որ
Չե՛ս վերադառնա։

* * *

Սարալանջերին
խեճաշռայլված
Ծաղկաթերթերից գույներ է արփին
Միածանների համար հավաքում՝
Բույրը թողնելով ժիր մեղուներին։

Հեռանում եմ ես քաղաքից ժխոր՝

Թևանցուկ արած հովի հետ անտես
Եվ ձուկն է ինչպես
գետի մեջ սուզվում՝
Բնության մեջ եմ
ես սուզվում այդպես։

ՃԵՊԱՆԿԱՐ

Անտառն՝ օվկիան։
Եվ անցնում եմ ես
Հատակով նրա
Ջրասույզի պես։
Եվ ծառից ընկնող
Տերևն անցողիկ
Ինձ թվում է, թե
Նավն է «Տիտանիկ»։

ԳԱՐՆԱՆ ԼՈՒՍԱԲԱՑ

Կոճկված դռնակի շողուն ճարմանդով՝
Մեր ցանկապատի նորահյուս դռտին
Մեծ խնդություն է սանձում պարտեզի՝
Պի՛րկ-պի՛րկ-պի՛րկ ձգված՝ պայթելուն մոտիկ։

Ծառից ծառ քաշվել են թռչունների
Պարանոմման դայլայլները թաց,
Որոնց վրայով փորձում է քայլել
Վարախաղացի պես օրն արթնացած։

Արեգակն է իր ճառագայթների
Թևերի վրա մեկ—մեկ հավաքում
Աքլորականչի օղակները ալ
Եվ լուսաբացի վզին փաթաթում։

ՎԵՆԵՏԻԿԻ ՊԱՏՐԱՆՔ

Գարնանային հորդ
Անձրևից հետո
Վենետիկ է մեր քաղաքը դարձել,
Կրկնակոշիկներ են ճոճվում խաղաղ
Ջրերի վրա մակույկների պես,
Որ բաց են թողվել մանկական ձեռքով...
... Եվ ուժեղանում է պատրանքը՝ բաց
Պատուհանից դուրս ալիքվող ոսկե
Ռաֆայելա Կարայի երգով։

ԲՆԱՆԿԱՐ

Հանդը՝ ճոճանակ
Աստղերից կախված։
Եվ ամբողջ գիշեր
Ուռենին կանդնած

Թախծում է, թախծում.
— Ո՞ւր կորավ Քամին,
Ինչո՞ւ չի ճոճում
Ճոճանակը իմ։
Եվ տխուր-տխուր —

Տխուր մորմոքում,
Երիցուկաթերթ է
Մեկ—մեկ պոկում.

«Սիրում, չի սիրում...
Սիրում... չի սիրում...»

... Եվ պոկված թերթերն
Աղավնի դառնում,
Երազանքների
Մեջ են սավառնում։

Իսկ Լուսնկան էլ
Կրծքում երկնքի
Թերթապոկ եղած
Սրտիկն է ծաղկի։

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՐԿԵՐ

1. Տումչա—օկկի՝ Մահվան գետ

Անճիչ է հոսում
ու անինքնագովք։
Եվ նրա կապույտ ալիքի առաջ
Գլուխկոնծի է ղենիթը տալիս
Ինչպես մի ջրա —

— դահուկավորդ քաջ։
Գետափ է գալիս սիրածից նամակ
Ստացած երջանիկ ղինվորն հուզավառ։
Եվ մերժվածների համար գետը միշտ
Գոնում էր բարի, սփոփիչ մի բառ։

Երգեր եմ գրել ես գետի ափին —
Ինձ եղել է միշտ նա հեղինակից
Եվ այդ պատճառով մաքրությունը սուրբ
Հառնում է ամեն իմ տողի տակից։

... Թողած Հյուսիսի
դիշերներն սպիտակ,
Թողած Հյուսիսի խստությունը պերճ՝
Եկել եմ վազուց հարազատ քաղաք։
Բայց այսօ՛ր էլ իմ հիշողության մեջ

Անճի՛չ է հոսում գետն, անինքնագովք՝
Կապույտ ծփացող երկինքը վրան...
... Եվ ո՞վ է նրան
Մահվան գետ կոչել —
Կյանքի՛ գետ եմ ես անվանում նրան։

2. Անդրհյուսիս

Լեռնաանտառի
Կեչաբներով ներքև կոհակվող
Հողին չհասած խշշոցն էր կանաչ
Սառչում կաթ-կաթ —
Հնչյուն առ հնչյուն
Ակկորդ առ ակկորդ
Դառնալով սառույց կեղևափաթաթ։

Գիշերը
Քամու շրթերի միջև
Մի մեծ հրաշքով ցաշուն երկարած
Պառույն էր սնձու անում հյութաքամ
Եվ թել—թել քաշում,
Բարձրացնում երկինք,
Որ... աստղեր դառնան։

3. Թզուկ կեչիներ

Թզուկ կեչիներ, թզուկ կեչիներ,
Ձեզ նայելիս իմ հոգին է ցավում,
Թե ինչո՞ւ-ինչո՞ւ մերձմոսկովյան՝
ձեր՝
Եղբայրների պես երկինք չեք չլում։

Գիտեմ—ուզում եք վերև սավառնել,
Սակայն կառչո՞ւմ եք կյանքատու հողից —
Մանո՛ւկն է այդպես փորձում քայլ անել՝
Վախից կպչելով Տարազատ մորից։

Եվ հասկանո՞ւմ է ձեզ հողը արդար,
Հո՞ղը, հո՞ղը լոկ, որ սիրով անգին
Ձեր յուրաքանչյուր ճյուղը հողմահար
Սեղմո՞ւմ է, սեղմո՞ւմ մայրական կրծքին։

4. Ձմեռային անտառում

Լռությո՞ւն է հիմա անտառում,
Լռություն անեղերք ու արդար։ —
Այդ
անտառն է շնչում
լայնակո՞ւրծք,
Այդ
անտառն երազում է
անդա՞վ։
Բայց ծառերն այս երբեք
չե՞ն դառնա
Պատուհան ու սեղան ու տախտակ։ —
Դարավոր ծառերն այս անտառի
Արկերով են վերքված անքանակ։
Իսկ անտառը շնչում է լայնակուրծք,
Իսկ անտառն երազում է անդավ...

Եվ դողո՞ւմ է հոգին իմ, դողո՞ւմ
Ինչպես ճյուղն այն, որից
ճյունն ընկավ...

5. Ձմեռն Ամառային այգում

Ձյուն է գալիս թափով,
Իմ շինելին նստում։ —
Ձյունաճերմակ ծածկոց
Նա ինձ վրա հյուսում՝

Խիտ ձուլվում է այգու
Ճերմակությանն արդար
Եվ... ես չկամ արդեն
Սիրող զույգի համար,

Որը կանգնել կնչու
Վարագույրի հետև
Եվ սիրո նոր մի հիմն
Առաքում է եթեր։

Ահա ջահել մի կին
Իր մանկիկին գրկած
Որպես կյանքի ծաղիկ
Տանում է կոկոնած,

Եվ կոկոնն այդ հրաշք
Հա—հա պիտի պայթի
Եվ ձյան ճշի վրա
Արփու հրճվանք կաթի...

... Եվ ես զգում եմ հոգով —
Նույնիսկ ձմռան ցրտին
Կյանքի գարո՜ւն է հար
Այգում Ամառային։

1976

ՀՈՐՍ ԽՈՍՔԵՐԻՑ

... Մեր արտասանած
Բառերն ավելորդ
Թե թուչեին ետ
Եվ մեր ճակատին
Հարվածեին խիստ,
Այսքան շատախոս
Մենք չէինք լինի...

ԱՆԶԱՐՎ

(ժողովրդական)

Մի թրթռուն է նուրբ
Իմ պատուհանի
Ապակուն նստել
Եվ այնպես տխուր,
Եվ այնպես ցավով
Նայում է ինձքիս։

Թիթեռն երկի
Նախատում է ինձ,
Որ ամռվան իրեն
Մի օր է տվել
Եվ այն էլ այսպես
Անձրևոտ, մռայլ։

ՊԱՏԿԵՐ

Սափրոն
Արձագանքի
Անդունդից

Ցած կախվում,
Քարերին է
Մեկ-մեկ
անդադար
Բախվում։

ԾՈՎԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Ալիքահատի՜ չ...
Ալիքահատի՜ չ...
Դիասկուրիայի
Պարիսպ աննվաճ...
Ծովն ակնածանքով
Գլուխ է թեքում
Քո անմահության
Գաղտնիքի առաջ։

ԼՈՒԻԿ ԱՊՐՈՒՄՆԵՐ

ՄԻ ԳՈՂԱՅՎԱԾ ԳԻՇԵՐ

Ես եկա քեզ մոտ
Եվ իմ մատների դողը ձայնագրեց
Պատուհանիդ նուրբ ապակու վրա
Ձարկերը սրտիս։

Եվ դու ցնցվեցիր սիրո մեղեդուց
Եվ... անզորացար
կարոտի առջև։
Հետո սպասումի օրը կարճացավ —
Քեզնով ապրելու գիշերն երկարեց։

... Ես եկա քեզ մոտ
Եվ մենք չիմացանք —
Մեղքի՞ նժարին դրինք կշռաքար,
Թե՞ երջանկության։

ՏԵՐԵՎԱՓԱՓ

Երբ հեռացար դու ինձանից,
Քայլերը քո մնացին պարզ
Թուղթի պես թպրտաթև,
Որ... հետքերով

վերադառնան։
... Հետո եղավ տերևաթափ։
Հետքերը քո ծածկվեցին...
... Տերևների տակ
Չե՞ս գտնում
Արահետը վերադարձի։

* * *

Բառերի
Խլացուցիչ հոսքում
Ուզում եմ ըմբռնել
Ցավի քնքշանք
Աղերսող շրթևրիդ
Թպրատացող ճիչը,
Քո լռության մեջ
Տեսնել այն ակնթարթը,
Երբ բառերը —
Կորցնելով իրենց
Բովանդակությունը —
Անցնում են
Անկշռելիության միջով։

* * *

Ես քո երկնային
Ցասումն եմ ներում,
Իսկ դու՝ հողեղեն թուլությունը իմ...
Հրդեհ է սիրո իմ անտառներում,
Մոխրացնող մոմոք տառապանքածին։

«Հանգցրո՞ւ հրդեհն իմ, —
Ճչում եմ, ճչում,
Տնքում եմ, —
Չունե՞մ, ես չունեմ հնա՞ր»։
... Եվ հրդեհն է քո
Իմի դեմ հառնում,
Որ... խեղդե՞ն իրար։
Որ խեղդե՞ն իրար...

* * *

Երկնքաթափի
Բևկորները սուր
Մովաթաղանթն են
Խիտ-խիտ ասղնտում—
Լսվում է արդեն
Աղն արնահոսի
Եվ կաթիլ-կաթիլ
Բյուրեղվում օդում։

Աստղերն են տենչում
Դողալով սպառվել...
Աղբյուրն է տենչում
Դառնալ խելագար...
... Հետո փակվում է
Արահետը մութ՝
Լեռները կաթե
Ձյունելով իրար։

* * *

Եվ մայրացումի
Մեծ ցավ է բխում
Գարնանամուտի
Բորբ երակներից
Եվ կարոտների
Լեռների վրա
Խելագարվում ենք
Երջանկությունից։

ՄԱՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ

Եվ չմակարդվող արյունի նման
Անունդ է հոսում վերքից շրթերիս։ —
Թունդ աղահոտից գժվում եմ ահա...
Բայց գժվելն արդյո՞ք ելք է, սիրելիս,
Երբ դեղնում եմ ես տերևի նման,
Երբ մաըմինն է իմ լինում արնաքամ...

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Ես օրն եմ ծալում նամակի նման...
Շրարի վրա գրում իմ հասցեն...
Որ հետու մի օր Օրն այս ստանամ,
Պիտի փոստատար-հուշին այն հանձնեմ։

Օրն այդ կունենա կշիռ կորըստի՞,
Թե՞ մի նոր օրվա երգ պիտի դառնա։
Այն պիտի քաշեմ ես հանց մոր բստի՞նք,
Թե՞ աչքս փակող ձե՞ռք պիտի դառնա։

ԱՆԶՐԵՎ

Քանի՞ օր արդեն անձրևն է թափվում...
Մոտալ փողոցի վրա խոնարհված
Ծառերի միջով մարդիկ են անցնում
Շատ անուշադիր, փութիկոտ, անթափանց։

Եվ անձրևի տակ և անձրևի տակ
Անձրևանոցներ են բացվել այնքա՜ն —
Կարմիր ու դեղին, մոխրագույն, սպիտակ —
Խենթաշոտալված սունկերի նման։

... Եվ ահա դո՛ւ էլ անցար համրորեն
Ինչպես նորաաճ մի սնկամարմին...
Բայց թունավո՞ր, թե՞ անթույն՝ չգիտե՜մ,
Չհասկացավ իմ դեռ անփորձ հոգին։

* * *

Ամպի մի բուռ արմավենու
ստվերը մրսող
Սրթսրթալով կուչ էր գալիս
Օրվա շաղվող հրճվանքի մեջ..
Ես ցանկացա,
Որ վախի պես զգայագրգիռ
Լիներ մոտ ու հասկանալի
Նոր արթնացող ծաղկաթերթի
Դողը երկչոտ ու արնակաթ,
Երբ ուսերիդ հրդեհը պաղ
Մոխրացնում էր իր բոցերում
Մեր սրտերի միջև ճոճվող
Բաժանումի սև պիշերվա
աստղերի չուն

Եվ վարդերի կոկոններում
Թաքնվում էր առավոտի
Շրթին ցողվող
Բույրը կարմիր։

* * *

Կարոտին սիրո
Այլևս չեղավ
Ոչ մի պատասխան
Եվ սահմանակցեց
Ցավը տագնապին։
Աղաչո՞ւմ եմ քեզ —
Թռչունին բաշխիր
Թռչելու նրա
Իրավունքը ջինջ։
Աղաչո՞ւմ եմ —
ինձ
Վերադարձրու
Քե՛զ։

ԼՈՒՍԱԲԱՑ

Ծարավ ձեռքերիս
Սիրո կարոտով
Ուզում եմ փրկել
Փխրուն ուսերիդ
Մերկացող ցրտից
Լուսաբացները
Ծաղկաթերթերի

Եվ շնչառությամբ
Ջերմացնել նրանց։
Մենք կդիմանանք
Ամենաազնիվ
Մեղքի ցավերին,
Եվ լուսաբացը
Կլինի կարմիր,
Եվ արեգակներ
Կխայտան ուրախ
Արտասուքներիդ
Ծաղկող բողբոջում։
Եվ կհամբանա
Կյանքն այդ ակնթարթ,
Որ շարունակվի
Հետո՝
Քո ճիչով։

ԼԵԳԵՆԴ ԱԳՌԱՎԻ ՄԱՍԻՆ

Մի աերևաթափ
Ծառի հավաքվել՝
Թռչուններն են
մեծ
Ժողով գումարել։

— Ձմե՞ռ է գալիս,
Ծի՛ւ, ցեղակիցնե՛ր,
Եկեք որոշենք
Անելիքը մեր։

— Որոշելու ի՞նչ
Կա, ծի՛ւ, ընկերներ,
Ձվենք—հեռանանք
Տա՛ք-տա՛ք երկրներ։

— Քվեարկում ենք, ծի՛ւ,
Ո՞վ է համաձայն։
— Անշուշտ, դեմ չկա...
—Անցավ միաձայն...

— Ես եմ դեմ...
— Ագռա՛վ...
— Ի՞նչ ես դուրս տալիս...
— Դրախտը վերջացա՛վ...
— Ձմե՞ռ է գալիս...

— Թող գա,
Մի՞թե դա
Առիթ է տալիս...
— Կատակը մի կողմ,
Ձմեռ է գալիս, —

Սարյակը առաջ
Բարկացած եկավ
Եվ Ագռավին
Խիստ
Ասաց, —
անիրա՛վ,
Թառե՞նք չորացած
Ճյուղերի վրա
Եվ սովից սատկե՞նք
Ձյուների վրա։

— Ի՞նչ ես դուրս տալիս,
Տո՛, Ագռա՛վ, անպետ՛ք,
Մննդավայրին
Մենք մեռա՞ծ ենք պետք, —
Ջոր ճյուղի վրա
Սոխակը ցատկեց
Եվ հանդիսավոր
Խիստ շարունակեց, —
Երբ անցնեն ձմռան
Հողմերը սաստիկ,
Կվերադառնանք
Նորից հայրենիք
Եվ մեր դայլայլով
Ասպածաբնծա
Կգովերգենք
մեծ
Գարունը նրա,

Վերածնունդը

Մեր Հայրենիքի
Կփառաբանենք
Զորությամբ երգի։
— Դուք, ցեղակիցներ,
Չգիտեմ՝ ինչպես,
Բայց Հայրենիքից
Չեմ հեռանա ես,
Բույրաշունչ գարնան
Օրերին ծաղկուն
Մալը հողն է տվել
Մեզ կենդանության,
Հոդմաշունչ ձմռան
Մահաբեր օրին
Ե՛ս կենդանության
Կտամ մայր հողին։
— Ուշքի եկ, Ագռավ,
Ո՞վ քեզ կգթա,
Փորձանքի ժամին
Ո՞վ քեզ հաց կտա։
— Ո՞վ կտա,
Ոչ ոք,—
Կռունկն ասաց ծեր,—
Ստիպված պիտի
Դառնա...
Լեշակե՛ր։
— Թեկուզ լեշակեր,
Բայց Հայրենիքից
Ոչ մի հզոր ուժ
Չի բաժանի ինձ։
Թեկուզ մահվա՛ն դուռ
Սովը հասցնի ինձ,

Չէ, չե՛մ հեռանա
Սուրբ Հայրենիքից։
— Ճի՛շտ է, ճի՛շտ, Ագռավ,—
Ճնճղուկը ասաց։
— Մովը չե՛մ թողնի, —
Ճայը շշնջաց։
— Լեղուդ պապանձվի,
Դավաճան Ագռավ, —
Սոխակն անիծեց
Ու չվեց հարավ։
Միծեռնակն օդը
Պոչով մկրատեց,
Մաքրեց կոկորդը,
Ժողովն ամփոփեց.
— Մեծամասնությամբ
Ձայների անցավ
Առաջարկը մեր —
Չվում ենք հարավ...
Ու ոմանք խմբով
Ու ոմանք մենակ
Հարավ չվեցին —
Երկրները տաք։
... Սակայն անեծքն է
Ի կատար ածվում
Եվ... լեշակեր է
Ագռավը դառնում,
Ձայնն է խռպոտվում —
Կրռա՛, կը՛ռ, կրռաա՛՛ —
Եվ խուլ տարածվում
Ձյուների վրա։
Սակայն փորձանքի
Ժամին Ագռավը
Երբեք չի լքում
Ծննդավայրը։

Երբ մեր դիմացի
Սարի կատարին
Ամպն էր որոտում
Եվ ուժգին-ուժգին
Ցնցում էր ծառեր,
Ցնցում էր տներ,
Դուռ ու պատուհան,
Ես՝ մոռանալով
Ամեն մի տեսակ
Ջարտճճի խաղ,
Վազում էի իմ
Մեծ մայրիկի մոտ,
Որ երեք անգամ
Քաշեր ինձ բերան։ —

— Մոտ արի, բալա,
Արի քո հոգուց
Վախն հանեմ—այրեմ
Երկնքի խորքում,
Որ կյանքի բոլոր
Ցավերի առաջ
Եվ փորձանքների
Առջև անհամար
Լինես միշտ անվախ,
Աննկուն լինես,
Համարձակ ու քաջ, —
Եվ ցուցամատով
Մեղմ, թեթևակի
Նա՝ երեք անգամ
Ծնոտս վերև
Քաշելուց հետո
Ժպտում էր, —

Բալիկ,
Վախը քո հոգուց,
Ջգո՞ւմ ես հանեցի
Նետեցի երկինք, —
Եվ երբ մի քիչ անց
Կայծակն էր փայլում,
Ասում էր.

— Նայիր,
Վա՞խն է քո այրվում։
— Մեծ մայր, ա մեծ մայր,
Հայկ քեռուս վախն էլ
Այդպե՞ս ես այրել
Երկնքի խորքում։
— Հա, ցա՜վդ տանեմ, —
Թափածում էր տատս՝
Հիշելով կռվում
Իր սպանված որդուն։
— Եվ ա՛յդ պատճառով
Նա ֆաշիստներին
Քշում էր անվախ
Մեր հողից անգին։
— Իհարկե,
Եվ երբ դու էլ մեծանաս,
Հայկ քեռուդ նման
Հերոս կդառնաս։
... Վազո՜ւց,
Շա՜տ վազուց
Մեծ մայրս չկա։
Սակայն այսօր էլ,
Երբ որ իմ առջև
Կյանքի խոչընդոտ,
Փորձանք է հառնում
Եվ այնքան-այնքան
Դժվար է լինում,

Հուսադրում եմ ինձ.
— Դե՛, դե՛, տատի թոռ,
Գլուխդ պահիր
Բարձր ու հպարտ
Եվ առաջ շարժվիր
Դեպի նպատակ
Համարձա՛կ, զվա՛րթ։
Եվ ավելացնում
Եմ յուրջ կատակով.
— Չէ՞ որ տատիկը
Վախը քո հոգուց
Հանել-այրե՛լ է։
Եվ — հավատացե՛ք—
Այդպես ավելի
Հեշտ է
Ապրե՛լը։

ԵՐԳԵՐ ԱՂՋԿԱՍ՝ ՍՈՒՍԱՆԻՆ

1. Մննդատուն

։.. Եվ արշալույսը
Դեռ չի երկինքվել։
Սակայն,
Ամառվա՛ծ իմ,
Ինչպե՞ս են զարկում
Զանգերը նրա —

Հուսալցվում է
Ճիչը մայրացման
Եվ նորածնի
Լացը արևոտ։

Եվ ամեն շշուկ,
Եվ ամեն հառաչ
Ապրում է հույսով՝
Շաղախվելով մեծ
Համբերում Ցավի։

... Այս քանի՛ երորդ
Անգամ աշխարհում
Նորից առաջին
Օրն է արարման։

2. Զարթոնք

Եվ որպես կյանքի
Գարնանաբեր ճիչ
Սերմն է արթնանում
Հողի մեջ քիչ-քիչ,
Որպեսզի փակի
Բախտահյուս շղթան
Մեծ ակնթարթի
Ու հավերժության։
Եվ... քո՛ր է գալիս
Հողի շերտը պինդ
Ինչպես նոր աստմ
Հանող մանկան լինդ։

3. Մանկության այգում

Հրա՛շք մանկություն, որտե՞ղ ես, արդյոք,
Ո՞ր կանաչափող ծառի հեռևից
Միկրակում ես ժիր անհոգությամբ
Եվ—չարաճճի՛ —լեզո՛ւ ցույց տալիս։
Հրա՛շք մանկություն, որտե՞ղ ես, արդյոք,
Ո՞ր թթենու խիտ տերևների մեջ
Թաքնվել ես ու մատնաչափ թթով
Սևացրել նորից մատներ ու երես։
Հրա՛շք մանկություն, որտե՞ղ ես, արդյոք,
Ինչո՞ւ ես անվերջ թաքնվում ինձնից,

Չէ՞ որ — տեսնո՛ւմ եմ — գետակի վրա
Նավա՜կ ես թղթե բաց թողել նորից։

Հրա՜շք մանկություն, որտե՞ղ ես, արդյոք,
Անանուն թախի՞ծ, թե՞ խինդ ես բերել...
...Թեկուզ մեծացել եմ առանց շապիկ,
Շապկո՛վ եմ, սակայն, ես աշխարհ եկել։

4. Երկունք

— Որտեղի՞ց եմ ես։
— Երկնքի՛ց, բալես, —
Ժպտում էր տատս՝
Ակնոցի տակից
Նայելով ուրախ, —
Այդ պատճառով ես
Դու բարձունք սիրում։
Եվ ես տատիկիս
Չէի՜ հավատում։

Չէի հավատում,
Քանզի ես երբեք
Չէի տեսել, որ
Երկնքից մանուկ
Բերեին աշխարհ։
Եվ հետո — ինչպե՞ս
Բերեին և ո՞վ...
— Խաբում ես, մեծ մայր։
— Չեմ խաբում, բալա։
...Այժմ ես հաստատ
Գիտեմ —
Երկնքի՛
Որդին եմ առողջ
Եվ նա՛ է տվել
Երազանքներիս·
Իր գույնը կապույտ։

Հիշում եմ նույնիսկ
Հեռո՜ւ — հեռավո՜ր
Օրորն աստղերի
Եվ ձյունաճերմակ
Աղավնուն,
Որն ինձ
Թևերին առած՝
Երկիր էր բերել։

5. Առաջին ձյուն

Փոքրիկ Սուսանը
Առավոտյան վաղ
«Հայրիկ, վեր կաց, վե՜ր, —
Կանչում է ուրախ,
Ճչում է, — նայիր
Պատուհանից դուրս,
Ճերմա՜կ է այնպես
Տանձենին, մաքո՜ւր։
Շաքարի փոշի
Ո՞վ շաղեց վրան,
Որ քա՜ղցր լինի
Պտուղը նրա»։

6 ...

Սուսանը պապին
Գլոբուս է տանում՝
Քնքշանքով սեղմած
Թպրտուն կրծքին
Եվ... նրա սրտի
Տրոփյունն է սուրբ
Կյանքի շունչ տալիս
Մեր երկրագնդին։

7. ՄԵՐ ՇՆԻԿԸ

Դժգոհում է մեր
Տատը հառաչում.

— Իզուր ինչո՞ւ է
Շնիկը հաչում։
Հաչում է, հաչո՜ւմ,
Իսկ ոչ ոք չկա՜...
Բայց նթե բակին
Մեկը մոտենա,
Վախ ու սարսափից
Չէ՞, էլ չէ՜ հաչի,
Մկնիկի նման
Մի կողմ կփախչի։
Պե՜տք է, ասացե՜ք,
Մի այնպիսի շուն,
Որն իզուր է միշտ
Հաչում հա հաչում...
— Ինչո՞ւ ես, տատիկ,
Նախատում շանը, —
Միծաղում է մեր
Փոքրիկ Սուսանը, —
Թեկուզ իզուր է
Հաչում, անտեղի,
Լռում է, սակայն,
Նա միշտ էլ տեղի՜ն —
Նթե մեր խելոք
Շունը չի հաչում,
Հասկացիր, որ հյուր
Նկել է մեր տուն։

ՉՐՈՒՅՑ

— Ուշադիր նայիր
Նկարին, Սուսան,
Տեսնո՞ւմ ես՝
Այրվող
Գրքե՜ր,
Նստարա՜ն...
— Ավերակնե՜ր են, —
Սուսիկը ասաց։
— Շե՜նք է դպրոցի՝
Ռումբից փուլ եկած,
Տեսնո՞ւմ ես
Պատի տակ
Աշակերտին...
— Այո,
Գնդա՜կ է

Նա սեղմել կրծքին։
Պապը հառաչեց.
— Գլոբո՜ւս է, Սուսա՜ն,
Ծովեր ու լեռներ,
Անտառներ վրան։
— Իսկ ինչո՞ւ է, պապ,
Գլոբուսը գրկել,
Նա երկրագո՞ւնդը
Ուզում է փրկել...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանաի հորիզոն 3
Հատվածներ «Համշենատատում» պոեմից . 3
Հայաստան աշխարհ, դու Բզնունի ծառ . 10
Երևկյան էքսպրոմտ Մասխին . . 13
Գրիգոր Նարեկացի 13
Մինաս Ավետիսյան 14
Հավատ 14
Տուն 15
Տողը սանդուղք անդունդի վրա . . 16
Լրաես 17
* * * 18
Շերամի երգ 19
Գլխապտույտ 19
Կիսախավար 20
Հատուցում 21
* * * 22
Ջհասկացանք 23
Ուշ աշուն 23
* * * 24
Ճեպանկար 25
Գարնան լուսաբաց 25
Վենետիկի պատրանք 26
Բնանկար 26
Հյուսիսային երգ 27
Հորս խոսքերից 31
Անձրև 31
Պատկեր 31
Ծովի գաղտնիքը 32
Մի գողացված պիշեր 33
Տերևաթափ 33
* * * 34
* * * 34
* * * 35
Մանի բաժանման 36
Երջանկության օր 36
Անձրև 37
* * * 37
* * * 38
Լուսաբաց 38
Լենենդ ագռավի մասին . . . 40
Զրույց աստիս հետ 44
Երգեր աղջկաս՝ Սուսանին . . . 46
Մեր շնիկը 49
Զրույց 51

ԱՐՏԱՎԱԶԴ ՀԱՅԿԻ ՍԱՐԵՅԱՆ

ԱՐԵՎԱՔԱՄԻ

Խմբագիր՝ Հ. Զորանյան
Նկարիչ՝ Լ. Վարդանյան
Տեխ. խմբագիր՝ Օ. Նեմիրովսկայա
Գեղ. խմբագիր՝ Ջ. Զենաիշվիլի
Սրբագրիչ՝ Մ. Բոստանջյան

Իբ 4981

Հանձնված է շարվածքի՝ 2. 01. 1989 թ.
Ստորագրված է տպագրության 08.01. 1989 թ.
Ուէ 02804, ֆորմատ 70X90 1/32, թուղթ № 1
Տառատեսակը՝ գրական: Տպագրությունը՝ բարձր:
Պայմանական տպագրական մամուլ՝ 2,13: Հաշվ.
հրատ. մամուլ 2,13: Տիրաժ 1.000 օրինակ:
Պատվեր՝ 273:

Գինը՝ 25 կոպեկ

«Մերանի» հրատարակչություն, 380008
Թբիլիսի, Ռուսթավելու պողոտա 42:
Վրացական ՍՍՀ հրատարակչությունների,
պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի Ախալքալաքի տպարան,
Գործարանային № 11

ᲐᲠᲩᲐᲕᲐᲖᲔ ᲡᲐᲠᲔᲪᲘᲐᲜᲝ

ᲛᲖᲘᲐᲜᲘ ᲫᲐᲠᲘ

(ᲡᲝᲛᲮᲣᲠ ᲔᲜᲐᲖᲔ)

გამომცემლობა „მერანი“, 380008
თბილისი, რუსთაველის გამზ. 42
საქართველოს სსრ გამსახკომის
ახალქალაქის სტამბა, ქარხნის
ქუჩა 11

АРТАВАЗД САРЕЦЯН

СОЛНЕЧНЫЙ ВЕТЕР

(на армянском языке)

Издательство «Мерани», 380008
Тбилиси, проспект Руставели, 42.
Ахалкалакская типография
Госкомитета Грузинской ССР
по делам издательств,
полиграфии и книжной торговли.
Ахалкалаки, ул. Заводская, 11.